

**ԲԱՆԿԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՕՐԻՆԱԿՈՎ**

Ս. Ն. ՀԵՐԳՆՅԱՆ

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳԴՀ տնտեսագիտական ֆակուլտետի փոխդեկան*

Լ. Ս. ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ԳԴՀ մագիստրատուրայի ֆինանսների 1-ին կուրսի ուսանողուհի

Բանկային համակարգի կայունությունը ցանկացած երկրի տնտեսության զարգացման համար կարևոր նախապայման է, որը թույլ է տալիս կանխատեսել բանկերի գործունեության ընդլայնման հեռանկարը և բարձրացնել դրանց կողմից նոր հաճախորդներ ընդգրկելու գրավչության աստիճանը: Դա որոշվում է ոչ միայն մրցակցության, այլև ռիսկի համընդհանուր մակարդակով: Այս առումով, բանկային գործունեությունը կապված է ռիսկերի կառավարման հիմնախնդիրների հետ, քանի որ բանկային ծառայությունների բազմազանությունն առաջ է բերում համակարգային այնպիսի ռիսկեր, որոնք ունեն ծագման տարբեր աղբյուրներ: Բանկերը պետք է կարողանան հստակ որոշել ռիսկի մակարդակը, որպեսզի խուսափեն անհիմն ռիսկերից՝ միաժամանակ պահպանելով հավասարակշռությունը ռիսկայնության և շահութաբերության միջև: Ռիսկային գործարքների կանխատեսումը թույլ է տալիս մշակել հաջորդական քայլեր՝ ռիսկերի նվազման և արդյունավետ կառավարման ուղղությամբ:

Անշուշտ, ռիսկը որոշումների կայացման ընթացքում առկա այնպիսի զարգացումների հավանականությունն է, որը կարող է բացասաբար անդրադառնալ տնտեսավարող սուբյեկտի շահույթի, կապիտալի, հետևաբար՝ ամբողջ գործունեության վրա և հանգեցնել կորուստների: Ռիսկն այն պոտենցիալ հնարավորությունն է, երբ ակնկալվող և չնախատեսված դեպքերը կարող են բացասական ազդեցություն ունենալ հաստատության կապիտալի և շահույթի վրա: «Ռիսկ» հասկացության մեջ կարելի է առանձնացնել հետևյալ տարրերը, որոնց փոխկապակցվածությունը բնութագրում է դրա էությունը.

- ենթադրվող նպատակից շեղման հնարավորություն, որի համար կատարվում է այլընտրանքների ընտրություն,
- ցանկալի արդյունքին հասնելու հնարավորություն,
- դրված նպատակին հասնելու վստահության բացակայություն,
- հնարավոր նյութական, բարոյական և այլ կորուստներ՝ կապված անորոշության պայմաններում ընտրված տարբերակի իրականացման հետ,

- անխուսափելի իրավիճակում անորոշության հաղթահարման հետ կապված գործողություն, որի ընթացքում հնարավորություն կա քանակապես և որակապես զնահատել առաջարկվող արդյունքին հասնելու հավանականությունը (անհաջողություն, նպատակից շեղում):

Բանկերի տեսանկյունից ռիսկը սեփականատերերի և բանկերի հաճախորդների կողմից բանկում ներդրված գումարները կորցնելու հավանականությունն է: Բանկային գործունեության բնագավառում խելամիտ կառավարումը նախատեսում է հնարավոր կորուստների կանխում կամ վերահսկում, իսկ շահույթի ստացումը հիմնավորված և հուսալի վճիռների կայացման արդյունք է: Այս պարագայում բանկի ղեկավարությունը պետք է սահմանի գործունեության՝ վճիռների կայացման այնպիսի ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտան բավարար տեղեկատվություն ստանալ բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը կանխատեսելու, զնահատելու և կառավարելու համար՝ նվազագույնի հասցնելով դրանց ազդեցությունը բանկի գործունեության վրա: Ընդ որում՝ այդ ընթացակարգերը պետք է նկարագրեն բանկի հակվածությունը տարատեսակ ռիսկերի և բնութագրեն աշխատողների գործունեության շրջանակները տարբեր իրավիճակներում:

Բանկի կայունության ապահովման նպատակով, որպեսզի իրականացվի ռիսկերի աղյուսավետ կառավարում, «ՎՏԲ-Ֆայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը մշակել է բանկային ռիսկերի կառավարման քաղաքականություն, որի նպատակն է՝ բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է բանկը: Սահմանվել են ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ՝ պարբերաբար վերահսկելով ռիսկերի մակարդակներն ու դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Բանկն ակտիվորեն զարգացնում է ռիսկերի կառավարման գործընթացն ինչպես ընթացակարգային, այնպես էլ տեխնոլոգիական իմաստով: Այստեղ ներդրված են ռիսկերի կառավարման մոր գործիքներ, որոնք համապատասխանում են շուկայի տեխնոլոգիական զարգացմանը և հնարավորություն են տալիս կառավարել առկա և բանկի կողմից մոր ապրանքների և ծառայությունների ներդրման հետ կապված ռիսկերը:

«ՎՏԲ-Ֆայաստան բանկ» ՓԲԸ-ն մշակել է ռիսկերի կառավարմանն ուղղված սկզբունքների համակարգ, որը ներառում է հետևյալ դրույթները՝

- բանկի բոլոր աշխատակիցների ուղղակի կամ անուղղակի ներգրավվածությունը ռիսկերի կառավարման գործընթացում,
- ապագայում ի հայտ գալու մեծ հավանականություն ունեցող հնարավոր վտանգների ինքնակառավարման մույնակամացում,

- ռիսկերի գնահատման իրականացումն առնվազն երկու տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների կողմից,

- բանկի կողմից երկարաժամկետ զարգացման ռազմավարության վրա հիմնված ռիսկերի կառավարման քաղաքականության սահմանում,

- բանկի կողմից դրամական շուկայի ներկա իրավիճակի մշտադիտարկում և գնահատում,

- պոտենցիալ վտանգները բացահայտելու նպատակով բանկի կողմից ֆինանսական շուկայի դրական, բացասական կողմերի վերանայում և կանխատեսում,

- բանկի նպաստումն արդյունավետ և օպտիմալ որոշումների կայացմանը և ռիսկերի կառավարման գործընթացում ռեսուրսների արդյունավետ օգտագործման ապահովում:

Կազմակերպության ռիսկերի կառավարման համակարգն ընդգրկում է հետևյալ գործառույթները.

- տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր հսկողության համար,

- բանկի տնօրինությունը վերահսկում է ռիսկերի կառավարման գործընթացը, հաստատում՝ ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգեր և մեթոդաբանություն,

- ակտիվների և պարտավորությունների կառավարման վարչությունն իրականացնում է իրացվելիության և շուկայական ռիսկերի կառավարում,

- վարկային և փոքր վարկային կոմիտեներից յուրաքանչյուրն իր իրավասության շրջանակներում պատասխանատու է վարկային ռիսկի համար,

- վերահսկողության վարչությունը պատասխանատու է բանկի ռիսկերի գնահատման և վերլուծության, զարգացման մեթոդների, ընթացակարգերի և այլ նորմատիվների մշակման համար:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն իր գործունեությունն իրականացնում է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների հիման վրա: ՀՀ ՄՍ 32 «Ֆինանսական գործիքներ. բացահայտում և ներկայացում» ստանդարտի համաձայն՝ բանկն իրականացնում է ֆինանսական գործիքների գնահատում՝ պարզելու ժամանակի և արժեքի սահմանափակումների ներքո նրանց իրական արժեքը բավարար արժանահավատությամբ որոշելու հնարավորությունը:

Բանկի գնահատմամբ՝ իր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքներն էականորեն չեն տարբերվում իրենց հաշվեկշռային արժեքներից: Նշենք, որ ֆինանսական ակտիվների և պարտավորու-

յունների գնահատված իրական արժեքները հաշվարկվում են զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով՝ հիմք ընդունելով ապագա դրամական հոսքերի գնահատումները և մնամատիպ գործիքների համար կիրառվող զեղչման տոկոսադրույքները հաշվետու ամսաթվի դրությամբ: Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է՝ ներկայացնել այն մոտավոր գումարը, որով բանկի ակտիվները կարող են փոխանակվել իրազեկ և պատրաստական կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության գործարքի» ընթացքում: Բանկն առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերում ներքին ռիսկերի և գործընթացների կառավարման նկատմամբ:

«ՎՏԲ-Ֆայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության ռիսկերը հիմնականում կապված են շուկայական (տոկոսադրույքի, արժուրային, վարկային, իրացվելիության) ռիսկերի հետ:

Վարկային ռիսկի կառավարում

Բանկը հաշվեկշռային և արտահաշվեկշռային վարկային ռիսկերը կառավարելու նպատակով մշակել է համապատասխան քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք հաստատվել են Բանկի խորհրդի կողմից:

Ձևավորված քաղաքականությունը ներառում է հետևյալ գործառնությունները՝

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերի սահմանում,
- վարկառուների վճարունակության գնահատման մեթոդաբանության մշակում,
- ապահովագրական ընկերությունների գնահատման մեթոդաբանության մշակում,
- գրավի գնահատման մեթոդաբանության մշակում,
- վարկային փաստաթղթերի պահանջների սահմանում,
- վարկերի և այլ վարկային գործիքների և գրավի շարունակական վերահսկման ընթացակարգերի մշակում:

Բանկի վարկային ռիսկը պայմանավորված է վարկային պորտֆելի և երաշխիքների առկայությամբ: Վարկային գործընթացի կառավարման պահանջների բացահայտման նպատակով բանկը մշտական հսկողություն է իրականացնում վարկավորման գործընթացում ներգրավված բոլոր մակարդակների աշխատակիցների պարտականությունների՝ ժամանակին և պատշաճ կերպով կատարման նկատմամբ: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների վարկային առաջարկները լրացվում, պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող վարկային մենեջերների կողմից և հաստատվում

առևտրավարկային վարչության կառավարչի կողմից՝ համապատասխան հաստատված լիազորությունների սահմանաչափերի շրջանակներում: Տրամադրված վարկերի և փոխառվածությունների վերլուծությունը, ըստ հաճախորդների, հանգամանորեն արտացոլված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Տրամադրված վարկերի և փոխառվածությունների վերլուծությունը ըստ հաճախորդների¹

Տրամադրված վարկերի և փոխառվածությունների վերլուծությունը ըստ հաճախորդների	01.01.2013 թ.		01.01.2012 թ.	
	Գումար (հազ. դրամ)	Քանակ	Գումար (հազ. դրամ)	Քանակ
Պետական ձեռնարկություններ	14,462,830	2	5,807,674	17
Մասնավոր ձեռնարկություններ	81,883,740	916	77,848,574	807
➤ խոշոր ձեռնարկություններ	38,474,642	223	39,374,479	175
➤ փոքր և միջին ձեռնարկություններ	43,409,098	693	38,474,094	632
Անհատ ձեռնարկատերեր	3,527,600	1,415	3,196,405	1,346
Ֆիզիկական անձինք,	65,602,400	135,038	60,917,607	123,845
➤ սպառողական վարկեր	38,843,102	112,564	35,281,636	103,845
➤ հիփոթեքային վարկեր	13,551,149	1,677	13,408,091	1,692
➤ ավտովարկեր	2,037,375	597	1,422,161	466
➤ վարկային քարտեր	11,170,773	20,200	10,805,720	17,504
Ընդամենը վարկեր	165,476,570	137,371	147,770,260	125,677
Հաճախորդներին տրված վարկերի և փոխառվածությունների գծով հնարավոր կորուստների պահուստ	-5,985,761	-	-7,612,383	-
Ընդամենը զուտ վարկեր	159,490,809	-	140,657,878	-

Ուսումնասիրությունները վկայում են, որ 01.01.2013 թ-ի դրությամբ բանկի կողմից պետական ձեռնարկություններին տրամադրված վարկերն ու փոխառվածությունները քանակային առումով զիջում են նախորդ տարվա նույն ցուցանիշին, մինչդեռ գումարային առումով գերազանցում են 8,655,156 հազ. դրամով:

¹ www.vtb.am

Դա վկայում է այն մասին, որ բանկն ավելացրել է պետական ձեռնարկություններին տրամադրվող վարկերի և փոխառվածությունների ծավալները:

01.01.2013 թ-ի դրությամբ պետական ձեռնարկություններին տրամադրված վարկերն ու փոխառվածությունները կազմել են ընդհանուր վարկային պորտֆելի 9.07%-ը, մինչդեռ 01.01.2012 թ-ին այն կազմում էր ընդամենը 3.9%, ինչից ենթադրվում է, որ բանկը պետական ձեռնարկությունների ներգրավմանն ուղղված քայլեր է ձեռնարկում, քանի որ դրանք ավելի նպատակահարմար են վարկավորման համար, քան մասնավոր ձեռնարկությունները, որովհետև ռիսկի գործոնը վերջիններիս մոտ ավելի մեծ է:

Անհատ ձեռնարկատերերին 01.01.2013 թ-ի դրությամբ տրամադրված վարկերն ու փոխառվածությունները գերազանցել են մախորդ տարվա մույն ցուցանիշը 331,195 հազ. դրամով, մինչդեռ վարկային պորտֆելում վերջիններս կազմել են.

- 01.01.2013 թ-ին՝ գումարային՝ 2.13%, քանակային՝ 1.03%,
- 01.01.2013 թ-ին՝ 2.16% և 1.07%:


Վերոնշյալից կարելի է հետևություն անել, որ թեև 2012 թ-ին անհատ ձեռնարկատերերին տրամադրված վարկերն ու փոխառվածությունները 2011 թ-ի համեմատությամբ աճել են, սակայն վարկային պորտֆելում դրանց տեսակարար կշիռը նվազել է:

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի ու փոխառվածությունների տեսակարար կշիռը պորտֆելում 01.01.2013 թ-ի դրությամբ կազմել է 39,6%, որից՝ սպառողական վարկերը կազմել են 59.20%, հիփոթեքային վարկերը՝ 20.65%, ավտովարկերը՝ 3.10%, իսկ վարկային քարտերը՝ 17.02%:

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը, պարբերաբար վերազնահատում հաճախորդների վճարունակությունը: Այդ նպատակով ուսումնասիրվում են հաճախորդի վերջին ֆինանսական հաշվետվությունները և վարկառուի կողմից տրամադրված կամ բանկի կողմից ձեռք բերված տեղեկատվությունները:

Հաճախորդներին տրամադրված վարկերի և փոխառվածությունների փոփոխության դինամիկան 2003-2012 թթ-ին ներկայացված է գծապատկեր 1-ում:

**Հաճախորդներին տրամադրված վարկերի և փոխառվածությունների
փոփոխության դինամիկան 2003-12 թթ-ին²**



Հարկ է նշել, որ վարկային պայմանագրեր պատրաստելիս բանկն օգտագործում է իր իրավաբանական վարչության կողմից հաստատված պայմանագրային ծները: Վարկային պայմանագրերը պատրաստվում են Վարկային գործառնությունների բաժնի կողմից՝ վարկային գործառնությունների կառավարչի անմիջական վերահսկողության և օժանդակության ներքո:


Գրավի ներկա շուկայական արժեքը գնահատվում է կամ անկախ գնահատողի, կամ բանկի մասնագետների կողմից: Որպես կանոն, շուկայական գների անկման դեպքում վարկառուից պահանջվում է լրացուցիչ արժեքների գրավադրում:

Բանկի խորհրդի կողմից հաստատված անհատների վարկավորման քաղաքականությամբ սահմանված չափանիշներին համապատասխանությունը ստուգելու նպատակով՝ Անհատների կողմից ներկայացվող վարկի դիմումները դիտարկվում են անհատների վարկավորման բաժնի կողմից:

Բանկի վարկային ռիսկի առավելագույն մակարդակն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքում՝ հաշվապահական հաշվեկշռում: Բանկը վերահսկում է վարկային ռիսկի կենտրոնացումը՝ ըստ արդյունաբերության ճյուղերի/ոլորտների և աշխարհագրական դիրքի:

Վարկային պորտֆելի վերլուծությունը՝ ըստ վարկավորման ոլորտների արտացոլված է զօնապատկեր 2 -ում:

² www.vtb.am



Վերլուծությունները վկայում են, որ վարկային պորտֆելում գերակշռող մաս են կազմել սպասարկման ոլորտը՝ 39.6%, առևտուրը՝ 22.6%, իսկ ամենափոքր բաժինը կազմել է հանրային սննդի ոլորտը՝ 0.2%:

Նշենք, որ բանկն իր ակտիվների գնահատումը, դասակարգումն ու կորուստների պահուստների ձևավորումը կատարում է ՀՀՀՀՄ 39-ի համաձայն: Աղյուսակ 2-ում արտացոլված են Բանկի արժեզրկված (չաշխատող) վարկերն ու փոխատվությունները 01.01.2013 թ-ի դրությամբ:

Աղյուսակ 2

ՎՏԲ-Հայաստան բանկի արժեզրկված (չաշխատող) վարկերը և փոխատվությունները

Արժեզրկված (չաշխատող) վարկեր և փոխատվություններ, այդ թվում՝	01.01.2013թ.	01.01.2012թ.
վարկեր և փոխատվություններ, որից՝	165,476,570	147,770,260
Արժեզրկված (չաշխատող) վարկեր և փոխատվություններ, այդ թվում՝		
➤ ժամկետանց	18,173,295	19,943,177
➤ վերաձևակերպված	-	-

³ www.vtb.am

➤ վերաֆինանսավորված	-	-
Ընդամենը վարկեր	165,476,570	147,770,260
Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով հնարավոր կորուստների պահուստ	-5,985,761	-
Ընդամենը զուտ վարկեր	159,490,809	147,770,260

Բանկի արժեզրկված (չաշխատող) վարկերն ու փոխատվությունները կազմել են 165,476,570 հազ. դրամ, որի կազմում ժամկետանց վարկերն ու փոխատվությունները կազմել են 10.98%: Ձևավորվել է նաև վարկերի և փոխատվությունների գծով հնարավոր կորուստների պահուստ` 5,985,761 հազ. դրամի չափով:

Բանկում վարկային ռիսկի կառավարման կարևոր տարր է մեկ խոշոր փոխառուի, բոլոր խոշոր փոխառուների, բանկի հետ կապված անձանց, բանկային գործիքների և մասնաճյուղերի գծով սահմանաչափերի սահմանումը, դրանց կատարման նկատմամբ հսկողության իրականացումը: Աղյուսակ 3-ում ներկայացված են վարկային ռիսկը բնութագրող ցուցանիշները և դրանց աճը 01.01.2013 թ-ի դրությամբ:

**Վարկային ռիսկը բնութագրող ցուցանիշները և դրանց աճը
01.01.2013 թ-ի դրությամբ**

(հազար դրամ)

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ	1-90 օր ժամկետանց	91-180 օր ժամկետանց	181-271 օր ժամկետանց	271 և ավել օր ժամկետանց	Ընդամենը
Վարկեր այդ թվում՝ արդյունաբերություն	147,303,275 15,627,859	4,523,333 117,682	2,983,483 0	2,724,769 0	7,941,707 0	165,476,570 15,745,541
գյուղատնտեսություն	6,392,352	0	0	0	0	6,392,352
շինարարություն	4,279,171	1,750,609	0	403,580	0	6,433,360
տրանսպորտ և կապ	2,217,530	581	0	13	2,304,232	4,522,356
արևոտող	28,565,939	619,084	2,138,013	1,433,012	4,597,994	37,344,041
համրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	348,051	0	0	0	0	348,051
ֆինանսական հատված	4,250,833	0	0	0	0	4,250,833
սպառողական վարկեր	60,921,536	2,035,377	845,471	888,164	911,851	65,602,400
տնտեսության այլ ծյուրեր	24,710,004	0	0	0	127,632	24,837,636
Երաշխիքներ, ակրեդիտիվներ	9,968,474	10,033	1,513	454	0	9,980,474

Ուսումնասիրությունները վկայում են, որ աշխատող ակտիվները կազմում են վարկային պորտֆելի 89.02%-ը, 1-90 օր ժամկետանց վարկերը՝ 2.73%-ը, 91-180 օր ժամկետանց վարկերը՝ 1.80%-ը, 181-271 օր ժամկետանց վարկերը՝ 1.65%-ը, իսկ 271 և ավել օր ժամկետանց վարկերը կազմում են վարկային պորտֆելի 4.8%-ը:

Նշենք, որ գյուղատնտեսության, հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտներում, ֆինանսական հատվածում 01.01.2013 թ-ի դրությամբ ժամկետանց վարկեր չեն եղել: Վարկավորման ոլորտներում գերակշիռ ժամկետանց վարկերը եղել են շինարարության ոլորտում՝ կազմելով ոլորտին տրամադրված վարկերի 33.48%-ը:

Շուկայական ռիսկի կառավարում

Շուկայական ռիսկը կապված է շուկայական գների տատանումների հետ, որը ներառում է արտարժույթի նկատմամբ փոխարժեքի, տոկոսադրույքի և կապիտալի գործիքների գների տատանումները, որոնք ազդում են բանկի եկամուտների կամ նրա ակտիվների վրա: Բանկը շուկայական ռիսկը կառավարում է՝ սահմանելով բաց դիրքի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքի մարման ժամկետների ճեղքվածքների և արժույթային դիրքերի գծով, որոնք պարբերաբար վերահսկվում և վերանայվում են:

Արտարժույթի ռիսկի կառավարում

Բանկն ունի արտարժույթներով արտահայտված մի շարք ակտիվներ և պարտավորություններ: Բանկն արտարժույթի ռիսկը կառավարում է՝ սահմանելով բաց դիրքի սահմանաչափեր արժույթային դիրքերի գծով: Փաստացի դիրքերի վերահսկումը սահմանաչափերի նկատմամբ կատարվում է օրական կտրվածքով և ներկայացվում բանկի ղեկավարությանը:

«ՎՏԲ-Ֆայաստան բանկ» ՓԲԸ-ում կիրառվում է արտարժույթի ռիսկի կառավարման VAR մեթոդը, որը հաշվարկվում է օրական կտրվածքով և ներկայացվում Բանկի Տնօրենության դիտարկմանը՝ եռամսյակային կտրվածքով ռիսկերի վերլուծության հաշվետվությունների շրջանակներում: Բանկում կիրառվում են նաև արտարժույթի ռիսկի հաշվարկման մոդուլներ՝ մասնավորապես արժույթի հաշվեկշռի կառուցվածքի կտրուկ փոփոխության ենթադրության հիման վրա:

Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիության ռիսկին բանկն առնչվում է ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները մարելու նպատակով միջոցներ հայթայթելիս:

«ՎՏԲ-Յայաստան բանկ» ՓԲԸ-ում իրականացվում է իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականություն, որի հիման վրա հնարավոր է վերլուծել ինչպես ընթացիկ, այնպես էլ իրացվելիության կանխատեսվող իրավիճակը:

Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը ներառում է հետևյալ գործընթացները.

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում՝ ըստ հիմնական արժույթների,
- դրամական միջոցների հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն՝ դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման պահուստային վերականգնողական ծրագրի մշակում,
- իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահիշուկում օրենսդրական և Վիժի-Բի խմբի պահանջների նկատմամբ:

Տոկոսադրույքի ռիսկի կառավարում

Տոկոսադրույքի ռիսկը բանկի շահույթի կամ ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Տոկոսային ռիսկը բանկում գնահատվում է եկամտաբերության կորի զուգահեռ շեղման ենթադրության հիման վրա, իսկ եռամսյակային կտրվածքով հաշվարկվում է դյուրացիայի խզումը: Փաստացի դիրքերի վերահսկումը սահմանաչափերի նկատմամբ կատարվում է օրական կտրվածքով և ներկայացվում բանկի ղեկավարությանը:

Գործառնական ռիսկի կառավարում

Բանկում գործառնական ռիսկերի կառավարման գործընթացը բաղկացած է նմանարկման չորս փուլերից և հաջորդող մոնիտորինգից: Բանկի բոլոր աշխատակիցները մասնակցում են նմանարկման և օպերացիոն ռեպերի տե-

ղեկատվության փոխանցման գործընթացին: Գործառնական ղեկավարը գնահատվում են գործառնական ռիսկերի բազայում, որից հետո պատասխանատու աշխատակիցը կազմում է դրանց հետագա վերացմանն ուղղված հանձնարարական:

Գնային ռիսկի կառավարում

Գնային ռիսկը բանկի ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում, որն առաջանում է շուկայի ընդհանուր և առանձին գործիքներին բնորոշ գործոնների ազդեցությամբ:

Այսպիսով՝ ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են, որ «ՎՏԲ-Ֆայաստան բանկ» ՓԲԸ-ում մշակված են ռիսկերի կառավարման առանձնահատուկ մեխանիզմներ և գործում են հստակ սահմանված ընթացակարգեր, որոնք նախադրյալ են ստեղծում բանկում ռիսկերի կառավարումն արդյունավետ կազմակերպելու համար:

Բանկի բառեր - բանկային համակարգի կայունություն, բանկային ռիսկ, ռիսկային գործարքների կանխատեսում, ռիսկերի արդյունավետ կառավարում

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ Մասնագիտական գրականություն

1. Ասատրյան Բ., «Բանկային գործ», ուսումնական ծեռնարկ, Երևան, 2004:
2. Ասրյան Գ., «Բանկի կառավարման հիմունքները», Երևան, 2003:
3. Գրիգորյան Ռ. Լ., «Ռիսկի կառավարում», ուսումնական ծեռնարկ, Երևան 2010:
4. Սիմոնյան Ա. Դ., «Ռիսկի տնտեսական հասկացությունը և դրա դերը բանկային գործում», Երևան, 2007:

Օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր

1. ՀՀ օրենքը «Բանկերի և բանկային գործունեության մասին», 1998:
2. «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ»:
3. «ՎՏԲ - Ֆայաստան բանկ» ՓԲԸ-ում Ռիսկերի կառավարման քաղաքականություն կարգ»

1. www.cba.am
2. www.vtb.am
3. www.finRisk.ru

ОСОБЕННОСТИ УПРАВЛЕНИЯ БАНКОВСКИМИ РИСКАМИ НА ПРИМЕРЕ КОММЕРЧЕСКОГО БАНКА «ВТБ - БАНК АРМЕНИЯ» ЗАО

М. Н. ЕРГНЯН

*Кандидат экономических наук, доцент,
замдекана экономического факультета ГГУ*

Л. М. ХУРШУДЯН

Студентка 1 курса магистратуры отделения «Финансы» ГГУ

В условиях рыночной экономики стабильность банковской системы является важной предпосылкой для экономического развития любой страны, которая позволяет предвидеть перспективы расширения банковской деятельности и повысить уровень привлекательности новых клиентов со стороны банков. В статье представлены установленные процедуры и особые механизмы управления банковскими рисками разработанные в банке «ВТБ банк Армения» ЗАО, которые обеспечивают эффективное управление рисками в Банке.

THE PECULIARITIES OF THE BANK RISK MANAGEMENT ON THE EXAMPLE OF VTB BANK (ARMENIA), CSC

M. N. HERGNYAN

*Candidate of Economics, Associate Professor,
Vice- Dean of GSU Faculty of Economy*

L. M. GHURSHUDYAN

First year student of GSU master's programme

In market economy the stability of banking economy is an important base for the economic development for any country. It enables to foresee the perspective of the expansion of bank activity and to raise the opportunity of attraction of the new customers. The article represents the particular mechanisms as well as stated procedures in management risks provided in VTB Armenian Bank, Closed Stock Company. They provide effective management of the Bank.